ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 90

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

07-ը մայիսի 2026թ.

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 26-ը (քվորումն ապահովված էր)։

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Մ. Մ. Օթարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը։

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ Մ. Մ. Օթարյանը քվեարկության դրեց նիստի օրակարգը։

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ ԻՄ զարգացման 2025-2030թթ. ռազմավարական ծրագրի 2025թ. գործողությունների պլանի կատարման մասին։
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի նախագահ՝ Ա.Հ. Մակարյան)

2. ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների մասին (2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակ)։
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի նախագահ՝ Ա.Հ. Մակարյան)

3. ԵՊՀ ԻՄ 2027թ. ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում։
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Մ. Օթարյան)

4. ԵՊՀ ԻՄ Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու Սմբատ Յուցուլյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին։
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Ս. Աթոյան)

5. Ընթացիկ հարցեր

   5.1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի օտար լեզուների ամբիոնի դոցենտ Մարատ Զուրաբյանի և Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ Մուշեղ Սարուխանյանի համահեղինակությամբ «Բառերի բուլգակովյան աշխարհը. Ռուս-հայերեն ստուգաբանական բառարան» ձեռնարկը երաշխավորելու մասին։
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ մեթոդական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյան)

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

ՈՐՈՇՈՒՄ

➢ Հաստատել նիստի օրակարգը։

Օրակարգի առաջին՝ «ԵՊՀ ԻՄ զարգացման 2025-2030թթ. ռազմավարական ծրագրի 2025թ. գործողությունների պլանի կատարման մասին» հարցի վերաբերյալ լսեցին *ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի նախագահ՝ Ա.Հ. Մակարյանի* հաղորդումը։

Նա մանրամասն ներկայացրեց ԵՊՀ ԻՄ զարգացման 2025-2030թթ. ռազմավարական ծրագրի 2025թ. գործողությունների պլանի կատարողականի վերաբերյալ մանրամասն տվյալները.

Նշվեց, որ 2025 թվականի համար նախատեսված է եղել 38 գործողություն, որոնց իրականացման ընթացքը փաստաթղթավորվել է Google Disk հարթակում իրականացվող օնլայն մոնիթորինգի միջոցով։ Իրականացվել է՝ 7 գործողություն (18.4%), ընթացքի մեջ է՝ 23 գործողություն (60.5%), որոնց մեծ մասը շարունակական բնույթ ունի և նախատեսված է մինչև 2030 թվականը, իրականացվել է մասնակի՝ 2 գործողություն, չի իրականացվել՝ 6 գործողություն։

Մասնագիտական կողմնորոշման շրջանակներում իրականացվել են այցեր մարզի 12 դպրոցներ, կարդացվել է 31 դասախոսություն, և կազմակերպվել են ճանաչողական այցեր 328 աշակերտների համար։ Օլիմպիադաներին մասնակցել է 177 աշակերտ։ Ստեղծվել է մասնագիտական կողմնորոշման ձեռնարկ։ Հաշվետու ժամանակահատվածում հրատարակվել է 28 գիտական աշխատանք, որոնցից մեկը՝ Scopus շտեմարանում, 12-ը՝ ԲՈԿ-ի կողմից ընդունելի պարբերականներում։ Կնքվել են միջազգային նոր հուշագրեր Ղազախստանի, Ռուսաստանի և Գերմանիայի բուհերի հետ։ Մշակվել է մասնաճյուղի «Բաց գիտության» քաղաքականությունը։ Վերանորոգվել են վարչական մասնաշենքի միջանցքները, բակը և երկրորդ մասնաշենքի տանիքը։ Բոլոր լսարաններում տեղադրվել են հակահիդեհային համակարգեր, իսկ երեք լսարաններում՝ տեսաձայնագրման համակարգ։ Թարմացվել է շրջանավարտների տվյալների բազան (ընդգրկված է շուրջ 5000 շրջանավարտ), տրվել է 135 հաղորդագրություն թափուր աշխատատեղերի վերաբերյալ, և 20 շրջանավարտ ուղղորդվել է աշխատանքի։

Նշվել է ստորաբաժանումների կողմից հաշվետվությունները թերի կամ ուշացումով ներկայացնելու խնդիրը։ Օրինակ՝ Բնագիտական ֆակուլտետը չի պատասխանել 13 գործողության, իսկ Ուսումնամեթոդական վարչությունը՝ 10 գործողության վերաբերյալ։

Գիտահետազոտական նախագծերում դասախոսների (4.8%) և ուսանողների (0.27%) ներգրավվածությունը մնում է խիստ ցածր։ Չի մշակվել «Կանաչ համալսարան» հայեցակարգը և չեն իրականացվել պիլոտային ծրագրեր։ Բացակայում է նաև աշխատակազմի գործունեության գնահատման համակարգը և էլեկտրական ենթակառուցվածքների ծանրաբեռնվածության տեղեկատուն։ Չի ստեղծվել աշխատանքային խումբ՝ կառուցվածքային վերափոխման կարիքների գնահատման համար, և չի իրականացվել վարձատրության համապարփակ վերլուծություն։

Ա. Մակարյանի ամբողջական հաղորդումը կարող եք տեսնել հավելված 1-ում։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը, տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, Վ. Սարգսյանը, ԿԲՈԱ բաժնի մասնագետ, համազեկուցող, հանձնաժողովի քարտուղար Մ. Ճաղարյանը և այլք։

Մասնավորապես ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը հանդես եկավ մի շարք դիտարկումներով և հանձնարարականներով.

- Հորդորեց գիտական աշխատանքների վերլուծությունն անել ավելի բացված տարբերակով, որպեսզի պարզ լինի՝ արդյո՞ք աճը գրանցվում է նույն մարդկանց հաշվին, թե՞ նոր դասախոսներ են ներգրավվում:
- Հանձնարարեց ստեղծել աշխատանքային թիմ՝ «Կանաչ համալսարան» հայեցակարգն ամբողջացնելու համար:
- Շեշտեց, որ յուրաքանչյուր չիրականացված կետի համար պետք է պարզվի պատասխանատուն և խոչընդոտող պատճառը:

Կարճ պարզաբանումներով հանդես եկավ նաև Վարդան Սարգսյանը (ենթակառուցվածքների մասով)։

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

ՈՐՈՇՈՒՄ

- «ԵՊՀ ԻՄ զարգացման 2025-2030թթ. ռազմավարական ծրագրի 2025թ. գործողությունների պլանի կատարման մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի նախագահ՝ Ա.Հ. Մակարյանի հաղորդումն **ընդունել ի գիտություն**:

Օրակարգի երկրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների մասին (2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակ)» հարցի մասին լսեցին *ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի նախագահ՝ Ա.Հ. Մակարյանի* հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքները բավականին ծավալուն են և վերհանում են ինչպես ձեռքբերումները, այնպես էլ համակարգային խնդիրները։

Նշվեց, որ հարցումն իրականացվել է որակի ապահովման բաժնի կողմից՝ ֆակուլտետների աջակցությամբ, և ապահովվել է 70% ընտրանք, ինչը հիմնավոր հիմք է վերլուծության համար։ Հարցաշարը բաղկացած էր չորս խոշոր բաժիններից՝ բավարարվածություն բովանդակությունից և ռեսուրսներից, ուսանողի սեփական աշխատանքից, դասախոսի կողմից կազմակերպումից և գնահատումից։

Մասնավորապես ուսանողների 97%-ը նշել է, որ ծանոթ է գնահատման համակարգին, 94.5%-ը բավարարված է ստացված գնահատականներով, միայն 3.7%-ն է համարել, որ գնահատականը չի համապատասխանել իր պատկերացումներին։ Բոլոր հարցված ուսանողները կարողացել են հաղթահարել առաջադրանքները։ Նշվել է, որ հետազոտական աշխատանքը հիմնականում նպաստում է նոր գիտելիքների ձեռքբերմանը։

Ուսանողների մեծամասնությունը համարում է, որ ինքնուրույն է կատարել աշխատանքը, սակայն միևնույն ժամանակ նշում է դասախոսի շատ բարձր (շուրջ 80%) աջակցության մասին: Տեղեկատվության և գրականության պակասը հիմնական խնդիրն է թե՛ 3-րդ, թե՛ 4-րդ կուրսեցիների համար: Տնտեսագետ ուսանողների համար մշտական խնդիր է պաշտոնական տվյալների անհասանելիությունը և հայալեզու մասնագիտական գրականության սակավությունը: Ուսանողները դժգոհել են միաժամանակյա ծանրաբեռնվածությունից, ինչը խանգարում է դասապրոցեսին: Խմբային աշխատանքների գնահատման մեջ ուսանողները բարձրացրել են անարդար գնահատման հարցը, երբ խմբի բոլոր անդամները ստանում են նույն գնահատականը՝ անկախ անհատական ներդրումից:

Ա. Մակարյանի ամբողջական հաղորդումը կարող եք տեսնել հավելված 2-ում:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը, Մանկավարժության և հոգեբանության ամբիոի դոցենտ Լ. Հարությունյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ Գ. Սիմոյանը, Վ. Պողոսյանը ԵՊՀ ԻՄ ՈՒԽ նախագահ Դ. Ալեքսանյանը, ՈՒԳԸ նախագահ Ս. Աբազյանը, ուսանող Շ. Շահնազարյանը և այլք:

Մասնավորապես Մ. Օթարյանը և Գ. Սիմոնյանը նկատեցին, որ հարցումներում առկա են հակասություններ՝ ուսանողները մի կողմից նշում են բարձր ինքնուրույնության մասին (72%), մյուս կողմից՝ դասախոսի շատ բարձր աջակցության (80%): Պարոն Սիմոնյանը հավելեց, որ սա բոլոր հարցումների խնդիրն է՝ ուսանողները փորձում են «իդեալական արդյունք» ցույց տալ, որպեսզի չնեղացնեն ոչ իրենց, ոչ էլ դասախոսին:

Մ. Օթարյանը փաստեց, որ տնտեսագիտության ոլորտում պաշտոնական տվյալների և հայալեզու գրականության պակասը մշտական խնդիր է: Ուսանողներից մեկն առաջարկեց, որ գրականության քիչ լինելը կարող է ուսանողին ավելի ազատ դարձնել սեփական վարկածներն առաջ քաշելու հարցում: Սակայն Ա. Մակարյանը և Մ. Օթարյանը հակադարձեցին, որ գիտական աշխատանքը պահանջում է ծանոթություն նախկին ուսումնասիրություններին՝ սեփական տեսակետը հիմնավորելու կամ հերքելու համար: Որպես լուծում՝ տնօրենն առաջարկեց ներդնել սիմուլյացիոն խաղեր (վիրտուալ բիզնես մոդելներ), ինչը թույլ կտա ուսանողներին աշխատել առանց իրական կազմակերպությունների փակ տվյալների:

Նշվեց, որ խմբային աշխատանքների ժամանակ հաճախ մեկ ուսանող է աշխատում, բայց բոլորը ստանում են նույն բարձր գնահատականը: Պարոն Սիմոնյանը նշեց, որ բնագիտական առարկաներում դժվար է տարանջատել աշխատանքի փուլերը, բայց դասախոսը պետք է տեսնի յուրաքանչյուրի ներդրումը: Ա. Մակարյանը խոստացավ ներկայացնել գնահատման նոր մեթոդոլոգիա, որը ներառում է ինքնագնահատում և փոխադարձ գնահատում:

Ա. Մակարյանը նշեց, որ Հայաստանում ոչ մի բուհ դեռևս իրատեսորեն չի հաշվարկում ուսանողի հետազոտական բեռնվածությունը: Նա շեշտեց, որ դասախոսների կողմից պլանավորված ժամանակը հաճախ «ռեալ չի», և անհրաժեշտ է մշակել հստակ ուղեցույցներ ուսանողի ժամանակը ճիշտ բաշխելու համար:

Քննարկման վերջում ուսանողները բարձրաձայնեցին նաև այն մասին, որ երբեմն դասախոսները չեն հետևում համալսարանի սահմանած միասնական կարգին կամ առաջադրում են սեփական պահանջները, ինչը շփոթություն է առաջացնում:

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշվեց*

ՈՐՈՇՈՒՄ

- «ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների մասին (2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակ)» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի նախագահ՝ Ա.Հ. Մակարյանի հաղորդումն **ընդունել ի գիտություն**:

Օրակարգի երրորդ **՝** «ԵՊՀ ԻՄ 2027թ. ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանի հաղորդումը։

Տնօրենը նշեց, ԵՊՀ ԻՄ 2027թ. ընդունելության մասնագիտությունների ցանկում էական փոփոխություններ չկան, նոր կրթական ծրագրեր չեն նախատեսվում: Քննարկման առանցքում է եղել Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի (ԻԿՄ) հեռակա ուսուցման հարցը, որի վերաբերյալ նշվել է, որ բանակից վերադարձած երիտասարդները հաճախ չեն ցանկանում սովորել առկա համակարգում, իսկ հեռակա տարբերակի բացակայությունը կամ հնարավոր փակումը խնդրահարույց է նրանց համար: Շեշտվել է, որ քոլեջներից ևս լինում են սակավաթիվ դիմորդներ (2-3 հոգի), ովքեր պետք է ուսումը շարունակեն ԻԿՄ առաջին կամ երկրորդ կուրսերում:

Զուգահեռաբար անդրադարձ է կատարվել բնապահպանության և բնօգտագործման մասնագիտության հեռակա ուսուցման հնարավորությանը, քանի որ ձևավորվող էկոպարեկային ծառայության պատճառով կարող է պահանջարկ առաջանալ: Սակայն տնօրենը հիշեցրել է նախկին բացասական փորձը, երբ միասնական քննությունների (կենսաբանություն) պատճառով 40 դիմորդից ոչ մեկը չէր կարողացել հաղթահարել դրական շեմը:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը, դոցենտ Գ. Սիմոնյանը և այլք։

Մասնավորապես Գ. Սիմոնյանը տեղեկացրեց, որ ֆակուլտետում տեղի է ունեցել օնլայն նիստ, որտեղ առաջարկվել է «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտությունը ներառել 2027թ. հեռակա ուսուցման ցանկում, քանի որ մասնաճյուղն ունի համապատասխան լիցենզիան: Միաժամանակ նա հարց է բարձրացրել այն մասին, թե արդյոք դիմորդները կկարողանան հանձնել կենսաբանություն առարկայի միասնական քննությունը:

Քննարկման արդյունքում որոշվել է հավանություն տալ հիմնական ցանկը(տես հավելված 3), իսկ ԻԿՄ և բնապահպանության հեռակա ուսուցման վերաբերյալ լրացուցիչ խորհրդակցություններ անցկացնել համալսարանի գործընկերների և պոտենցիալ գործատուների հետ։

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշվեց*

ՈՐՈՇՈՒՄ

1. «ԵՊՀ ԻՄ 2027թ. ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում» հարցի վերաբերյալ Մ.Օթարյանի զեկուցումն ընդունել ի գիտություն։
2. Հավանություն տալ ԵՊՀ ԻՄ 2027թ. ընդունելության մասնագիտությունների ցանկը՝ համաձայն հավելված 3-ի:

Օրակարգի չորրորդ՝ «ԵՊՀ ԻՄ տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու Սմբատ Ցուցուլյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար, մրցութային հանձնաժողովի նախագահ Մ. Աթոյանի հաղորդումը։

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ մրցութային հանձնաժողովը մանրամասն ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

ԵՊՀ ԻՄ տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնակծու, Սմբատ Ցուցուլյանը 2018թ.-ից իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գործունեություն, մասնավորապես վերջին 3 ուսումնական տարիների ընթացքում (2022-2025թթ.) աշխատում է ԵՊՀ ԻՄ «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնում որպես ասիստենտ, 0,25 դրույքով։ Սմբատ Ցուցուլյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2013թ. հուլիսի 3-ին (վկայագիր Ա № 06667)։ Նա ունի հրատարակված 41 աշխատանք, ընդ որում՝ 30 գիտական հոդված, 1 ուսումնամեթոդական հոդված և 1 ուսումնամեթոդական ձեռնարկ հրատարակվել են ատենախոսության պաշտպանությունից հետո։

ԵՊՀ ԻՄ Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնակծու, Սմբատ Ցուցուլյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը քննարկվել է ԵՊՀ ԻՄ-ի Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի 2026թ. մարտի 7-ի թիվ 8 նիստում։

Հաշվի առնելով այդ ամենը կարելի է արձանագրել, որ ԵՊՀ ԻՄ-ի Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնակծու, Սմբատ Ցուցուլյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները բավարար են դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելու համար՝ համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին կարգ»-ի 5-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում կարող է շնորհվել» կետի 2)-րդ ենթակետի՝ «2) գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, որոնք գիտական կոչում շնորհող բուհում վերջին 3 ուսումնական տարվա ընթացքում անընդմեջ իրականացրել են հայցվող գիտական կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում ունեն հրատարակված ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանք, որոնց ընդհանուր թիվն առնվազն 3 է.», ինչպես նաև կարգի 7-րդ կետում նշված նորմատիվային փաստաթղթերի պահանջներին՝ «7. Գիտական կոչում ստանալու համար անձը դիմում է ներկայացնում բուհի ռեկտորի կամ կազմակերպության տնօրենի անունով, որտեղ հիմնական աշխատող է, կամ համատեղությամբ աշխատող է՝ առնվազն 150 ակադեմիական ժամ ժամավճարով։ Դիմումին կցվում են անհրաժեշտ փաստաթղթեր (Ցանկ 1)»։

Այնուհետև կազմվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ Գ. Սիմոնյան, պատմության և հասարակագիտության ամբիոնի վարիչ Ա. Ազատյան, ուսանող Շ. Շահնազարյան և կազմակերպվեց փակ գաղտնի քվեարկություն։

Փակ գաղտնի քվեարկության արդյունքները ներկայացրեց հանձնաժողովի նախագահ Գ. Սիմոնյանը։

Նա նշեց, որ քվեարկությանը մասանակցել են գիտական խորհրդի 25 անդամներ, Սմբատ Ցուցուլյանին երաշխավորելու համար կողմ քվեարկել 25, դեմ՝ 0 ։

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվեց

ՈՐՈՇՈՒՄ

- Հաստատել փակ(գաղտնի) քվերակության արդյունքները։

Արդյունքում որոշվեց.

ՈՐՈՇՈՒՄ 90/1

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնակծու, Սմբատ Ցուցուլյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին կարգ»-ի 5-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում կարող է շնորհելը» կետի 2)-րդ ենթակետին, ինչպես կարգի 7-րդ կետում նշված նորմատիվային փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 20-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնակծու, Սմբատ Ցուցուլյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնակծու Սմբատ Ցուցուլյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

Ընթացիկ հարցեր։

5.1. **Օրակարգի** ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի օտար լեզուների ամբիոնի դոցենտ Մարատ Զուրաբյանի և Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ Մուշեղ Սարուխանյանի համահեղինակությամբ «Բառերի բուլգակովյան աշխարհը. Ռուս-հայերեն ստուգաբանական բառարան» ձեռնարկը երաշխավորելու մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ *մեթոդական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանի* զեկույցը:

Մակարյանը նշեց, որ այս աշխատանքը բավականին երկար պատմություն ունի և հիմնված է Մ. Զուրաբյանի թեկնածուական ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների վրա: Այն շուրջ 250 էջանոց ծավալուն ձեռնարկ է, առաջարկեց ձեռնարկը հստակեցնել որպես «ուսումնաօժանդակ ձեռնարկ»: Նա աշխատանքը

բնութագրվեց որպես օրիգինալ ուսումնասիրություն, որի հիմքում ընկած է Միխայիլ Բուլգակովի հայտնի «Վարպետը և Մարգարիտան» վեպը: Ձեռնարկում տրվում է ռուսերեն և հայերեն տեքստերի համատեղ մեկնաբանություն, մասնավորապես՝ տերմինների, եզրույթների և պատմական կերպարների ստուգաբանական վերլուծություն:

Նշվեց, որ ձեռնարկն արդեն անցել է քննարկման բոլոր անհրաժեշտ փուլերը՝ ամբիոններում, ֆակուլտետի գիտական և մեթոդական խորհուրդներում, ինչպես նաև ստացել է անհրաժեշտ գրախոսականներն ու ռեցենզիաները: Ա. Մակարյանը նշեց, որ հեղինակներն առաջարկել են ձեռնարկը հրատարակել սեփական ֆինանսական միջոցների հաշվին (ինքնաֆինանսավորմամբ):

Զեկույցի ավարտին Ա. Մակարյանն առաջարկեց երաշխավորել ձեռնարկը հրատարակության, ինչը միաձայն ընդունվեց խորհրդի կողմից:

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշվեց*

ՈՐՈՇՈՒՄ N 90/2

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 17-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 17-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի օտար լեզուների ամբիոնի դոցենտ Մարատ Զուրաբյանի և Հայոց լեզվի ամբիոնի դոցենտ Մուշեղ Սարուխանյանի համահեղինակությամբ «Բառերի բուլգակովյան աշխարհը. Ռուս-հայերեն ստուգաբանական բառարան» ուսումնաօժանդակ ձեռնարկը երաշխավորել հրատարակման:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ _____ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ Մ. Ս. ԱԹՈՅԱՆ